



ԱԼԱՎԵՐԴԻ ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆ
 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵԼԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
 PUBLIC ENVIRONMENTAL INFORMATION CENTRE OF ALAVERDI

ԳԳ Լոռու մարզ, ք.Ալավերդի,
 Զորավար Անդրանիկի 8/1, 403 սենյակ
 հեռ. (+374) 25324114, 91199324
 էլ. փոստ info_alaverdi@earthus.am
 anushhevan@rambler.ru

Lori, Alaverdi,
 Zoravar Andranik str. 8/1, 403
 Tel. (+374) 25324114, 91199324
 E-mail info_alaverdi@earthus.am
 anushhevan@rambler.ru

ՀՀ Լոռու մարզպետ պարոն
 Ա. Նալբանդյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն մարզպետ.

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27, 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագրը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ որպես պատասխանատու մարմին,

խնդրում եմ Ալավերդու Օրհուս կենտրոնին տրամադրել պաշտոնական տեղեկատվություն հետևյալի մասին.

1. Լոռու մարզպետարան եղե՞լ առաջարկ Ախթալայի «Նահատակ» կոչվող պոչամբարի շարունակությամբ նոր պոչամբարի կառուցման վերաբերյալ եթե այո, ապա ու՞մ կողմից և ե՞րբ/պատճենները/
2. Մարզպետարանի կողմից կատարվե՞լ են ուսումնասիրություններ, ստուգումներ «Ախթալայի ԼՂԿ» ՓԲԸ աշխատանքային գործունեության և պոչամբարների վերաբերյալ եթե այո, ապա արդյունքների մասին տեղեկատվություն

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան է տրվում այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու մեր հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մեր ժաման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

Շնորհակալություն:

Հարգանքով՝

Ալավերդու Օրհուս կենտրոնի համակարգող

Անուշ Էվոյան

30.03.2015թ.